

յուլիսի 20-ին հանդիպող շարաթ օրը : Կտակակատար կարգուած են՝ 1) համբաւաւոր Ֆիլիպ դը Մէզիէր, Կիպրոսի Պետրոս Ա. թագաւորին նախկին դիւանապետը, որ քաջուած առանձնացած էր Կեղեատինեանց վանքը, ուր ամփոփուեցաւ իր մարմինն ալ (*). 2) վանահայրն (1) այն Միաբանութեան որուն եկեղեցիին մէջ պիտի թաղուէր իր մարմինը. եւ 3) իր երկու սենեկապետները՝ Փրանկիսկոս Միր ու Լուգովիկոս :

Կտակին երկու օրինակներն ալ կորսուած են հիմա . բայց բարերախտաբար Կեղեատինեանց վանքին յատկացուած ոխվերու (fondations, վաֆֆ) մատենին մէջ, որ հիմա Փրանսական Ազգային Դիւանարանը կը պահուի եւ կը կրէ LL 1505 թիւը, ամբողջապէս ընդօրինակուած է բարեպաշտական ու բարեգործական նուէրներու կարգին, եր. 9—19 : Տարակոյս չկայ թէ այս կտակին իսկական մէկ օրինակը պահուած էր Լեւոնի քով, իսկ միւսը՝ իբրեւ կտակընկալ՝ Կեղեատինեանց վանքը, ինչպէս կը հաստատուի

(*) Անաւասիկ Ֆիլիպ դը Մէզիէրի տապանագիրը, որ իր կենսագրութեան ամփոփումն է. « Cy gist Monseigneur Philippes de Maizieres en Sainctois, chevallier, chancellier de Chypre, conseiller et banneret de l'hostel du Roy de France Charles, le quint de ce nom, qui trespassa de la gloire de l'hostel royal a l'humillité des Celestins, l'an de grace MCCCLXXX, et rendit son esprit a Dieu le XXIX^e jour de may, l'an de grace MCCCXV.—Ledict chevallier fut faict chancellier de Chypre au temps de tres vaillant roy Pierre de Lusignan, quin roy latin de Hierusalem apres Godeffroy de Bouillon, roy de Chypre; lequel, par sa grande prouesse et haulte entreprinse, print par bataille et a ses frais les citez d'Alexandrie en Egypte, Tripoly en Syrie, Layas en Arménie, Sathalie en Turquie et plusieurs aultres citez et chasteaux sur les ennemis de la foy de Jesus Christ; et, apres la piteuse mort du tres excellent Roy, ledict son chancellier fut appellé au service du Pape Gregoire XI^e et finalement au service de son droict seigneur naturel, lettré, sage, debonnaire, catholicque et bien fortuné Roy de France, Charles, le quint de son nom, desquels Pape et Roy les bonnes memoires soient presentes devant Dieu.» (E. Raunié, *Épitaphier du Vieux Paris*, fis. Բ, եր. 425—427.)

(1) Կեռելի բէ այս վանահայրին անունն էր Fr. Guy de Ruy, որովհետեւ Պարիսի Ազգ. Դիւանարանին մէջ պահուած S 3801 թիւը կրող ձեռագիրը՝ քղ. 235 թ՝ Ֆիլիպ դը Մէզիէրի հետ միասին կը յիշատակէ զայն, իբրեւ կտակակատար Լեւոնի :